ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ.

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՐՈ՞ՒՍՏ, ԹԵ՞ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

Հիմնաբառեր. *պատերազմ, հանրային համախմբում, սոցիալական կապիտալ, վստահություն*

Լիանա ԻՍԱՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2019 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թվականից մինչ օրս համագործակցում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ՝ որպես հետազոտական խմբերի անդամ: Մասնակցել է մի շարք մասնագիտական գիտաժողովների և դասընթացների:

OCRID ID: https://orcid.org/0000-0003-0091-645X

Արտաքին սպառնալիքի դեպքում մարդիկ, սովորաբար, հակված են միավորվելու, համախմբվելու և վստահելու իրենց առաջնորդներին, որոնք խոստանում են հասարակությանը տանել ընդհանուր նպատակին հասնելու ճանապարհով: Հետպատերազմական ժամանակաշրջանում, սակայն, պարտվող կողմի բազմաթիվ կորուստների շարքում (մարդկային կյանքերի կորուստ, այլ ռեսուրսների գծով կրած վնասներ, տեղահանված ու ապրուստից զրկված ընտանիքներ և այլն) կա նաև կորուստների անտեսանելի մի խումբ, որը հատկապես կարևոր է ապագայի համար: Խոսքը հասարակության միասնականության և իշխանության ու միմյանց նկատմամբ վստահության ռեսուրսի մասին է: Ի՞նչ անել հետպատերազմական հասարակությունում սոցիալական կապիտալի թուլացման վտանգը մեղմելու համար: Ի՞նչ է հուշում պատմությունը: Սրանք են այն հիմնական հարցերը, որոնք քննարկվում են սույն հոդվածում:

Պատերազմի առաջին իսկ օրերին բոլորս ականատես եղանք ազգային համախմբման բազմաթիվ կոչերի ու գործնականում դրա մի շարք դրսևորումների՝ հանգանակություններից մինչև տեղեկատվական պայքարի բազմամարդ հարթակների ստեղծում, ռազմական և այլ կարիքների համար համագործակցում, մտավոր ռեսուրսի կենտրոնացման փորձեր և այլն: Արտաքին վտանգի դեպքում մարդկանց միավորման այս մղումը, իրականում, հատուկ է գրեթե բոլոր հասարակություններին: Այսպես՝ միկրոմակարդակում հանրային համախմբման օրինակներ են Աֆղանստանում



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Դիտարկված երկրներում միջանձնային (ա) և կառավարության նկատմամբ (բ) վստահության մակարդակը պատերազմից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո[1]

Թալիբանի դեմ պայքարող կամ Սիերա Լեոնեի քաղաքացիական պատերազմի ժամանակ ինքնապաշտպանական խմբերի ձևավորումը և հասարակության անդամների կողմից նրանց ցուցաբերված աջակցությունը: Մակրոմակարդակում, ըստ Է. Սմիթի, միջնադարյան Ֆրանսիան և Իսպանիան, օրինակ, ազգային համախմբման և միասնության համար պարտական էին, համապատասխանաբար, անգլիացիների և մավրերի դեմ մղված պատերազմներին[2]:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում պատերազմներից հետո: Սովորաբար, պատերազմի ավարտից հետո պարտված հասարակությունում նկատվում են մի շարք ընդհանրական երևույթներ. կառավարության նկատմամբ վստահության մակարդակի նվազում, հանրային լարվածության աճ, համագործակցության թուլացում, հասարակության պառակտում ըստ տարբեր խմբերի: Միաժամանակ, օրակարգային խնդիր է դառնում վստահության «մաշված» ռեսուրսի պատճառով հասարակության պառակտում թույլ չտալը, հատկապես, որ, ի տարբերություն միջպետական հակամարտությունների, որոնք հաճախ նպաստում են ազգային միասնության, հասարակության համախմբվածության ամրապնդմանը, պետության ներսում տեղի ունեցող բռնի բախումները թուլացնում են դրա սոցիալական ենթակառուցվածքները: Բախումները պառակտում են բնակչությանը՝ խարխլելով միջանձնային և համայնքային խմբերի վստահությունը, ոչնչացնելով այն նորմերն ու արժեքները, որոնք համագործակցության և կոլեկտիվ գործողությունների հիմքում են, այդպիսով մեծացնելով նաև համայնքային բախումների հավանականությունը[3]:

Գծապատկեր 1-ում պատերազմում պարտված մի քանի երկրների օրինակով արտացոլվել է սոցիալական կապիտալի երկու կարևորագույն տարրերի՝ միջանձնային վստահության (արտահայտել ենք հասարակության մյուս անդամների նկատ-

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ օգտագործելով “World Values Survey” հարցման համապատասխան տարիների տվյալներ (երկրների ընտրությունը պայմանավորված է տվյալների առկայությամբ), http://www.worldvaluessurvey.org/WVSContents.jsp

[2] Jennings C., Sanchez-Pages S., Social Capital, Conflict and Welfare, 2016, https://www.researchgate.net/publication/302466512_Social_Capital_Conflict_and_Welfare

[3] Colletta N. J., Cullen M. L., The nexus between violent conflict, social capital and social cohesion: Case studies from Cambodia and Rwanda, Social Capital Initiative Working Paper No. 23, 2000, 36 p., http://www.dmeforpeace.org/educateforpeace/wp-content/uploads/2014/06/060614_ViolentConflictSocialCapitalAndSocialCohesion-CaseStudiesFromCambodiaAndRwanda_World-Bank_English.pdf

մամբ վստահության ցուցանիշի, իսկ Հընդկաստանի դեպքում՝ նաև տարբեր խմբերում ընդգրկվածության ցուցանիշի միջոցով) և կառավարության նկատմամբ վստահության փոփոխությունը պատերազմի ընթացքում և դրանից հետո: Ինչպես տեսնում ենք, եթե 2001 թ.-ին Բանգլադեշին պարտված Հնդկաստանում, ինչպես նաև 1994-1997 թթ. Իրաքի քրդական քաղաքացիական պատերազմին մասնակցած և պարտված Թուրքիայում կառավարության նկատմամբ վստահության մակարդակը բարձրացել է, ապա պարտությունից հետո երկու երկրում էլ նկատվում է վստահության աստիճանի անկում (գծապատկեր 1 բ/): Մյուս կողմից, պատերազմի ավարտից հետո բարձրացել է միջանձնային վստահության մակարդակը (գծապատկեր 1 ա/)՝ բացառությամբ Հնդկաստանի, որտեղ մեծացել է տարբեր խմբերում ընդգրկվածության ցուցանիշը (ներկայացված է բաց գույներով), որի պատճառների մասին կխոսենք ստորև:

Ընդհանրապես, բախումների հետևանքով հասարակության մեջ տեղի է ունենում սոցիալական կապիտալի քայքայում, ինչը կարող է արտահայտվել հասարակությունից որոշ անհատների մեկուսացմամբ կամ եղած խմբերի պառակտմամբ (գծապատկեր 2 ա/): Բազմաթիվ են դեպքերը, երբ անհատները, որոնք բախումների հետևանքով կրել են վնասներ կամ դարձել ողբերգական իրադարձության զոհեր (օրինակ՝ առողջության հետ կապված խնդիրներ, ամուսնալուծություն կամ ֆինանսական կորուստներ), սկսել են ավելի քիչ վստահել ուրիշներին: Նույնիսկ ֆուտբոլիստները, որոնք ծագումով քաղաքացիական պատերազմ ապրած երկրից են, ավելի մեծ քանակությամբ դեղին և կարմիր քարտեր են ստանում, քան խաղաղ պետությունների ներկայացուցիչները[4]:

Մյուս կողմից, մարդիկ, լինելով սոցիալական էակներ, բախումների ավարտից հետո աչքի են ընկնում այլոց հետ շփման, տարբեր խմբերում ընդգրկվելու ցանկությամբ: Հոգեբանները պարզել են, որ երբ անհատը մտածում է մահվան մասին, արտադրվում է քիմիական նյութ (նեյրոպեպտիդ օքսիտոցին), որը կարող է ստիպել նրան նույնականանալ իր խմբի և խմբային արժեքների հետ: Համեմատաբար վաղ ժամանակների գիտնականները (օրինակ՝ Չարլզ Դարվինը) կարծում էին, որ հակամարտությունը որոշակի բարեփոխումներ է առաջացնում հասարակության մեջ, իսկ Ք. Քրամերը պնդում էր, որ բռնությունը ոչնչացնում, բայց հաճախ նաև զուգորդվում է սոցիալական ստեղծագործականության հետ[5]:

Որոշ հետազոտությունների համաձայն՝ Սիերա Լեոնեի քաղաքացիական պատերազմի ընթացքում բռնության կամ բախման զոհ դարձած անձինք նախընտրել են ընդգրկվել համայնքում և քաղաքական խմբերում, մասնակցել համայնքային հանդիպումների, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և այլն:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Սոցիալական կապիտալի քայքայումը (ա) և կապող ու կամրջող սոցիալական կապիտալի վերաձևավորումը (բ)[6]

[4] Aghajanian A., Social Capital and Conflict, HiCN Working Paper 134, 2012, p. 11, https://www.researchgate.net/publication/235443868

[5] Նույն տեղում, էջ 9:

[6] Jackson M. O., Social and Economic Networks, Princeton University Press, This Draft: February 2008 (մեկնաբանությունները հեղինակինն են):

Ըստ մեկ այլ գիտափորձի՝ փորձարարական խաղերի մասնակիցները, որոնք բռնության և բախումների ավելի մեծ ազդեցություն էին կրել Նեպալի պատերազմի ընթացքում, ցուցաբերել են սոցիալական կապիտալի ավելի բարձր մակարդակ: Ընդ որում, հեղինակները, դիտարկելով սոցիալական կապիտալի այս փոփոխության հիմքում առկա կառուցակարգերը, եկել են այն եզրակացության, որ դա պայմանավորված է ոչ թե անհատական նախասիրությունների ու վարքի փոփոխությամբ, այլ ինստիտուցիոնալ հարմարեցմամբ, քանի որ հակամարտություն ապրած համայնքները որդեգրում են առավել հասարակամետ նորմեր[7]:

Նշենք, սակայն, որ այս ամենը նպաստում է սոցիալական կապիտալի կապող, այլ ոչ թե կամրջող տեսակի ամրապընդմանը (գծապատկեր 2 բ/)[8], ինչը կարող է նույնիսկ վտանգավոր լինել հասարակության պառակտման և քաղաքացիական պատերազմների հանգեցնելու տեսանկյունից: Երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ 35 երկրում (մոտ 35,000 մասնակից) կատարված հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ պատերազմական ժամանակներում տուժածների շրջանում երկարաժամկետ հեռանկարում նվազել է քաղաքական վստահությունը, խթանվել են հավաքական, այսպես ասած, «մութ» բնույթի գործողությունները՝ պայմանավորված պետության նկատմամբ վստահության մակարդակի անկմամբ: Պատերազմական բռնության անձնական կամ ընտանեկան ազդեցությունը կայուն և բացասական հետք է թողել ողջ Եվրոպայում ու Կենտրոնական Ասիայում քաղաքական վստահության աստիճանի վրա՝ անկախ հակամարտության արդյունքից կամ բնույթից: Ընդ որում, դա անդրադարձել է նաև սերունդների վրա՝ հանգեցնելով տվյալ հասարակությունում բախումների և դրանց «թակարդների» ռիսկի մակարդակի բարձրացմանը[9]: Սոցիալական կապիտալը կարող է հեշտությամբ այլասերվել՝ խաթարելով սոցիալական համախմբվածությունը, մասնատելով հասարակությունը՝ հանուն անհատական և խմբային շահերի, մեծացնելով հնարավոր բախումների առաջացման հավանականությունը: Որպես բնորոշ օրինակ՝ կարելի է մատնանշել Կամբոջան, որտեղ հասարակության մեջ վստահության կորուստը հանգեցրեց դրա մասնատման, ինչի անմիջական հետևանքը դարձան Լոն Նոլի կառավարության ստեղծումը և Կմեր Ռուջի արշավը՝ մարդկանց շահարկելու, հարկադրանքի, կասկածների ու վախի միջոցով վերահսկողություն պահպանելու նկատառումով: Իսկ Ռուանդայի օրինակը ցույց է տալիս, որ քաղաքական ու տնտեսական վերնախավը հաճախ օգտագործում է ինքնությունը՝ առկա սոցիալական կապիտալը համախմբելու և այլասերելու համար՝ որպես սեփական նպատակներին հասնելու պատրաստի միջոց[10]:

Մեկ այլ հետազոտության մեջ նշվում է, որ ընդհանրապես սոցիալական կապիտալի բարձր մակարդակը, որն արտահայտվում է հասարակության մեջ կապերի ուժեղությամբ և խտությամբ, կարող է «բացասական» հետևանքների (հեղինակները նկատի ունեն ժողովրդավարության անկումը) հանգեցնել, ինչի վառ օրինակ է նացիստական գաղափարախոսության արագ տարածումը 1930-ական թվականների Գերմանիայում, այն դեպքում, երբ 1928 թվականին Ազգային սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցությունը, ունենալով 100,000 անդամ, լինելով երկրի ամենամեծ կուսակցություններից մեկը,

[7] Aghajanian A., Social Capital and Conflict, HiCN Working Paper 134, 2012, p. 9-10, https://www.researchgate.net/publication/235443868.

[8] Կապող սոցիալական կապիտալը վերաբերում է խմբի կամ համայնքի ներսում առկա կապերին, մինչդեռ կամրջողը՝ սոցիալական դասի, ռասայի, կրոնի կամ այլ կարևոր սոցիալ-ժողովրդագրական կամ սոցիալ-տնտեսական հատկություններով առանձնացող խմբերի միջև գոյություն ունեցող առնչություններին:

[9] Grosjean P., How WWII shaped political and social trust in the long run, 2019, https://voxeu.org/article/how-wwii-shaped-political-and-social-trust-long-run

[10] Colletta N. J., Cullen M. L., The nexus between violent conflict, social capital and social cohesion: Case studies from Cambodia and Rwanda, Social Capital Initiative Working Paper No. 23, 2000, 36 p., http://www.dmeforpeace.org/educateforpeace/wp-content/uploads/2014/06/060614_ViolentConflictSocialCapitalAndSocialCohesion-CaseStudiesFromCambodiaAndRwanda_World-Bank_English.pdf

ընտրության ժամանակ ստացել էր ձայների միայն 2.6%-ը[11]: Մեջբերված վերլուծության հեղինակները ցույց են տալիս բարձր դրական կոռելյացիա համայնքներում սոցիալական կապիտալի մակարդակի (ընկերակցություններում, տարաբնույթ խմբերում ընդգրկվածության ցուցանիշով չափվող) և նացիստական ուժերի մուտքի արագության միջև: Այսինքն՝ գերմանացիները հավատում էին, որ նացիստական կուսակցությունը պատրաստվում է բարելավելու իրենց վիճակը, քանի որ իրենց խմբի մյուս անդամները վստահություն էին հայտնում Ֆյուրերի ուղերձների նկատմամբ: Ընդ որում, համաձայն հետազոտության արդյունքների, գաղափարախոսության տարածումը կախված չէր խմբերի, խմբակցությունների տեսակից և հավասարաչափ վերաբերում էր թե՛ ֆրանսիացիներից հաշվեհարդար տեսնել ցանկացող վետերանների, թե՛ գարեջրագործների կամ նապաստակ պահողների միություններին[12]:

Իսկ ինչպե՞ս կրկին ոտքի կանգնեց այս երկիրը Երկրորդ համաշխարհայինից հետո: Բանն այն է, որ պատմական փորձը կարող է ձևավորել ոչ ֆորմալ նորմեր և «արտադրել» սոցիալական կապիտալ: Եվ Գերմանիայում, և՛ Ճապոնիայում 1920-ականների և 1930-ականների աշխատանքային անկարգություններն ու բախումները, որոնք նացիստներն ու Ճապոնիայի ռազմական կառավարիչներն օգտագործեցին իրենց նպատակների համար, պատերազմում պարտվելուց հետո ժողովրդավարական իրավահաջորդ վարչակարգերը կանխեցին կառավարման և աշխատանքային հարաբերությունների շատ ավելի համաձայնեցված մոտեցմամբ, որի միջոցով էլ ստեղծվեց Գերմանիայի սոցիալ-շուկայական տնտեսությունը (Sozial marktwirtschaft) և Ճապոնիայի ցմահ զբաղվածության համակարգը, որոնք ստացան սոցիալական կապիտալի ձև և, անկախ որոշ թերություններից, թույլ տվեցին պատերազմից հետո վերադառնալ աճի փուլ[13]: Փաստորեն, այս երկրներում վերացվեց հեղափոխության և վերջնարդյունքում՝ բռնապետության հանգեցնող պատճառը: Արդյունքում, ինչպես ցույց են տալիս որոշ հետազոտություններ[14], ժամանակակից Գերմանիայում նախկինում որպես «ական» օգտագործված սոցիալական կապիտալն արդեն ծառայում է որպես բարեկեցության ապահովման գործոն: Գլխավորն այստեղ վստահության քայքայված ռեսուրսի վերականգնումն է, ինչը հատկապես էական նշանակություն ունի Հայաստանի դեպքում, քանի որ մեզանում սոցիալական կապիտալի ենթատարրերից ամենագերակշռողը մինչպատերազմյան Հայաստանում կառավարության նկատմամբ վստահության ցուցանիշն էր, իսկ առավելապես միջանձնային կապերին և հանրային մասնակցությանը վերաբերող ցուցանիշները հետ էին ընկնում[15]: Հետպատերազմյան ժամանակաշրջանում, քանի դեռ չի «վերակառուցվել» վստահությունը, իրական վերակառուցում տեղի ունենալ չի կարող, իսկ համերաշխություն ու խմբային համագործակցություն խրախուսելու փորձերը կարող են հակառակ ազդեցություն ունենալ: Արտաքին միջամտությունները (այլ պետության կամ միջազգային կառույցների) նույնպես պետք է լինեն զգուշավոր՝ աջակցելով և թույլ տալով համագործակցության ինքնաբերաբար կայացմանը, հնարավորություն ընձեռելով ստեղծելու ցանցեր և կառուցելու պատասխանատու քաղաքացիական հասարակություն[16]:

Այսպիսով՝ պատերազմից հետո խա-

[11] Voth H. J., Voigtländer N., Satyanath Sh., Bowling for Adolf: How social capital helped to destroy Germany's first democracy, 2013, https://voxeu.org/article/bowling-adolf-how-social-capital-helped-destroy-germany-s-first-democracy

[12] Նույն տեղում:

[13] Fukuyama F., Social Capital and Civil Society, The Institute of Public Policy George Mason University, 1999, https://www.imf.org/external/pubs/ft/seminar/1999/reforms/fukuyama.htm#figl

[14] Botzen K., Social Capital and Economic Well-being in Germany's Regions: An Exploratory Spatial Data Analysis, The journal of ERSA, Volume 3, Number 1, 2016, pp. 1–24, https://openjournals.wu.ac.at/region/paper_73/73-new.html

[15] Իսայան. Լ., Սոցիալական կապիտալի էությունը, գնահատման մոտեցումներն ու փաստացի մակարդակը ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», 2020, N1, Տնտեսագետ հրատ., Եր., 2020, էջ 9-24, https://asue.am/upload/files/science/banber/2020-year-1/2020.1.pdf

ղաղության «կառուցումը» ներառում է ոչ միայն տնտեսական վերակառուցման կամ ֆիզիկական ենթակառուցվածքի վերականգնման ու տնտեսության կայունացման, այլև դրական սոցիալական կապիտալի աշխուժացման ու սոցիալական համախմբման ամրապնդման գործընթացներ: Վնասված սոցիալական կապիտալը խոչընդոտում է ռազմական գործողությունների դադարեցումից հետո համայնքային և պետական կարողությունները վերականգնելուն: Հիմնական նպատակը տեղային ինստիտուտների կառուցումն է, որոնք կխթանեն ներառական զարգացումը՝ լսելի դարձնելով մարդկանց ձայնը և ստեղծելով հակամարտությունների հարթեցմանն անհրաժեշտ սոցիալական ենթակառուցվածքներ: Նույնիսկ կապիտալի այլ ձևերի համալրում ապահովելու դեպքում, եթե չվերականգնվեն սոցիալական կապիտալի պաշարները՝ ամրապնդելով հասարակության ընդհանուր համախմբվածությունն ու վերականգնելով իշխանության նկատմամբ վստահության «մաշվածությունը», դա կհանդիսանա տնտեսական և սոցիալական զարգացման խոչընդոտ[17]:

Գլխավոր եզրակացությունն այն է, որ թեև հասարակությունում առկա կապերն ու խմբակցությունները երբեմն կարող են օգտագործվել նաև բացասական նպատակներով (գործող իշխանության դիրքի ամրապնդում, տարբեր շահեր հետապնդող խմբերի հանցավոր կամ քաղաքական այլ գործունեության իրականացում[18]), հանգեցնելով պառակտման և քաղաքացիական պատերազմի հրահրման, այնուամենայնիվ, դրանց ամբողջովին բացակայությունը կարող է բարդացնել որևէ ընդհանուր նպատակի իրագործումը: Հյուսիսային Կիպրոսի չճանաչված հանրապետության օրինակով կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ սոցիալական, մասնավորապես՝ ոչ ֆորմալ սոցիալական կապիտալը կարևորագույն ռեսուրս է՝ անհրաժեշտ խմբի գոյության համար: Հեղինակները նշում են, որ այստեղ բնակվող թուրքերը, որոնք առանձնանում են բարձր սոցիալական կապիտալով (խմբային համերաշխություն, փոխվստահություն, ընտանիքների՝ պատերազմի և խաղաղության ժամանակ համագործակցելու պատրաստակամություն), ունեն գոյատևելու մեծ հնարավորություն ու մեծ հույս, մինչդեռ ցածր սոցիալական կապիտալով խմբերի գոյությունն արտաքին վտանգի դեպքում չափազանց երերուն է[19]: Մի շարք էմպիրիկ ուսումնասիրություններ ցույց են տալիս առավել կոոպերատիվ հասարակության առավելությունները. հանրային ինստիտուտներն ու հանրային քաղաքականությունն ավելի արդյունավետորեն են գործում, տնտեսական աճի տեմպերը մեծանում են, բարձրանում է մարդու արտադրողականության մակարդակը, ֆինանսական ներդրումներն ու ցանցերն աճում են և այլն[20]: Հաշվի առնելով այն իրողությունը, որ հետպատերազմական հասարակություններում մարդկանց մեջ մեծանում է տարբեր խմբերում ընդգրկվելու, որևէ գաղափարի շուրջ համախմբվելու հակումը, չափազանց կարևորվում են ուղղակի առաջացած էներգիայի հոսքը ճիշտ ուղղությամբ թեքելն ու կառավարելը:

Գերխնդիր է դառնում այնպիսի սոցիալական կապիտալի ստեղծումը, որը բխում է համայնքային ավանդույթներից և մշակութային ու ընտանեկան համերաշխությունից՝ ամրապնդելով հասարակության անդամների միջև կապերը, կամրջելով ու միավորելով առանձին խմբերի: Զա-

[16] Colletta N. J., Cullen M. L., The nexus between violent conflict, social capital and social cohesion: Case studies from Cambodia and Rwanda, Social Capital Initiative Working Paper No. 23, 2000, p. 27, http://www.dmeforpeace.org/educateforpeace/wp-content/uploads/2014/06/060614_ViolentConflictSocialCapitalAndSocialCohesion-CaseStudiesFromCambodiaAndRwanda_World-Bank_English.pdf

[17] Նույն տեղում:

[18] Acemoglu D, T Reed, and J A Robinson, "Chiefs: Elite Control of Civil Society and Economic Development in Sierra Leone", Working Paper 18691, National Bureau of Economic Research, 2013՝ մեջբերված Վոֆի և համահեղինակների կողմից:

[19] Mehmet K., Mehmet O., Family in war and conflict: using social capital for survival in war torn Cyprus, Occasional paper, No. 28, Ottawa, Ontario, 2003.

[20] Aghajanian A., Social Capital and Conflict, HiCN Working Paper 134, 2012, 15 p., https://www.researchgate.net/publication/235443868

փազանց էական են դառնում ծրագրերը, որոնք ապակենտրոնացնում են պետական իշխանությունը և մեծացնում քաղաքացիական հասարակության դերակատարների ու անհատների մասնակցությունը՝ օգնելով վերականգնել կամ ձևավորել (նոր իշխանության դեպքում) հավատ կառավարության նկատմամբ և խրախուսել համագործակցությունը վստահորդների միջև:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Aghajanian A., Social Capital and Conflict, HiCN Working Paper 134, 2012, 15 p., https://www.researchgate.net/publication/235443868
2. Botzen K., Social Capital and Economic Well-being in Germany's Regions: An Exploratory Spatial Data Analysis, The journal of ERSA, Volume 3, N 1, 2016, p. 1–24, https://openjournals.wu.ac.at/region/paper_73/73-new.html
3. Colletta N. J., Cullen M. L., The nexus between violent conflict, social capital and social cohesion: Case studies from Cambodia and Rwanda, Social Capital Initiative Working Paper No. 23, 2000, 36 p., http://www.dmeforpeace.org/educateforpeace/wp-content/uploads/2014/06/060614_ViolentConflictSocialCapitalAndSocialCohesion-CaseStudiesFromCambodiaAndRwanda_World-Bank_English.pdf
4. Fukuyama F., Social Capital and Civil Society, The Institute of Public Policy George Mason University, 1999, https://www.imf.org/external/pubs/ft/seminar/1999/reforms/fukuyama.htm#figI
5. Grosjean P., How WWII shaped political and social trust in the long run, 2019, https://voxeu.org/article/how-wwii-shaped-political-and-social-trust-long-run
6. Guriev S., Melnikov N., War, Inflation, and Social Capital, American Economic Review: Papers & Proceedings 2016, 106(5): pp. 230–235, http://dx.doi.org/10.1257/aer.p20161067
7. Jackson M. O., Social and Economic Networks, Princeton University Press, This Draft: February 2008
8. Jennings C., Sanchez-Pages S., Social Capital, Conflict and Welfare, 2016, https://www.researchgate.net/publication/302466512_Social_Capital_Conflict_and_Welfare
9. Keho Y., Social Capital in Situations of Conflict: A Case Study from Côte d'Ivoire, An International Multi-Disciplinary Journal, Ethiopia Vol. 3 (3), April, 2009, (pp. 158-180).
10. Mehmet K., Mehmet O., Family in war and conflict: using social capital for survival in war torn Cyprus, Occasional paper, No. 28, Ottawa, Ontario, 2003
11. Schindler K., Social Capital and Post-war Reconstruction: Evidence from Northern Mozambique, Berlin, Germany, 2010, https://www.oecd.org/dev/pgd/46839990.pdf
12. Voth H. J., Voigtländer N., Satyanath Sh., Bowling for Adolf: How social capital helped to destroy Germany's first democracy, 2013, https://voxeu.org/article/bowling-adolf-how-social-capital-helped-destroy-germany-s-first-democracy

Лиана ИСАЯН
Аспирант, АГЭУ

ПАНОРАМА ВОЙНЫ

СОЦИАЛЬНЫЙ КАПИТАЛ ВО ВРЕМЯ И ПОСЛЕ ВОЙНЫ: УТРАТА ДОВЕРИЯ ИЛИ СОЦИАЛЬНАЯ СПЛОЧЕННОСТЬ?

В случае внешней угрозы люди обычно склонны объединяться, доверять своим лидерам, которые обещают вести общество по пути к общей цели. Однако в послевоенный период среди множества потерь проигравшей стороны (гибель людей, ущерб по другим ресурсам, депортированные и лишенные средств к существованию семьи и т.д.) есть невидимая группа потерь, которая особенно важна для будущего. Речь идет о единстве общества - ресурсе доверия к власти и друг другу. Что можно сделать, чтобы снизить риск ослабления социального капитала в послевоенном обществе? Что подсказывает история? Это основные вопросы, обсуждаемые в этой статье.

Ключевые слова: *война, социальная сплоченность, социальный капитал, доверие*

Liana ISAYAN
PhD student, ASUE

WAR PANORAMA

SOCIAL CAPITAL DURING AND AFTER THE WAR: LOSS OF TRUST OR SOCIAL COHESION?

In the event of an external threat, people are usually inclined to unite, to trust their leaders, who promise to lead the society through the path to a common goal. In the post-war period, however, among many losses of the losing side (loss of human life, damage to other resources, displaced families, etc.) there is an invisible group of losses that is especially important for the future. It is the unity of the society - the resource of trust towards the government and each other. What can be done to reduce the risk of weakening social capital in a post-war society? What does history suggest? These are the main issues discussed in this paper.

Key words: *war, social cohesion, social capital, trust*